


# ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

## Թեմայի ամփոփում

*լրացուցիչ խնդիրներ և առաջադրանքներ*

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում հասարակական կյանքի քաղաքական ոլորտը:
2. Ո՞ր ժամանակներին է վերաբերում աշխարհի առաջին քաղաքական բաժանումը:
3. Աշխարհի քաղաքական բաժանման ու վերաբաժանումների ի՞նչ ժամանակաշրջաններ են առանձնացվում:
4. Ի՞նչ փոփոխություններ կրեց Եվրոպայի քաղաքական քարտեզը նապոլեոնյան պատերազմների հետևանքով:
5. Ո՞ր պետությունների ռազմաքաղաքական խմբավորումների միջև սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Որո՞նք են դրա հետևանքները:
6. Երբ և ինչպե՞ս ավարտվեց գաղութային համակարգի լիակատար փլուզումը: Որո՞նք են դրա գլխավոր փոփոխությունները:
7. Ովքե՞ր էին «սառը պատերազմ վարող կողմերը»: Ինչո՞վ ավարտվեց այն:
8. Ի՞նչն է միավորում զարգացող երկրներին մեկ տիպում, և որո՞նք են նրա ենթատիպերը:
9. Ի՞նչ է ուսումնասիրում քաղաքական աշխարհագրությունը:
10. Որո՞նք են աշխարհաքաղաքական գործընթացներում կարևոր դերակատարություն ունեցող «մարդկային գործոնները»:
11. Բնութագրե՛ք Հայաստան-Վրաստան համագործակցության բնագավառները, նշե՛ք հիմնախնդիրները:
12. Միջազգային ի՞նչ կառույցների է անդամակցում Հայաստանի Հանրապետությունը:
13. Ինչո՞վ է պայմանավորված աշխարհի ուժային նոր կենտրոնների առաջացումը:
14. Ինչպիսի՞ աշխարհի կողմնակից եք. միաբևե՞ռ, երկբևե՞ռ, թե՞ բազմաբևեռ:

**5.** Եթե մինչև 1990-ական թթ. աշխարհը երկբևեռ էր՝ ԱՄՆ և ԽՍՀՄ, սոցիալիզմի համակարգի փլուզումից հետո դարձավ միաբևեռ՝ ԱՄՆ ուժային կենտրոնով, ապա XXI դարում աշխարհը կունենա աշխարհաքաղաքական տարբեր հզորության մի քանի ուժային կենտրոններ՝ ԱՄՆ, Եվրոպա, Չինաստան, Ճապոնիա, Ռուսաստան, հնարավոր է նաև՝ Հնդկաստան, Բրազիլիա: